



ՀՀ բնապահպանության  
նախարարություն



**«Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ/00035799 ծրագիր**

**Երևանի Ավան համայնքի կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ծրագիր**

Ավան բնակելի թաղամասի կենտրոնացված ջերմամատակարարման (ԿՁ) համակարգի վերականգնումը նախատեսված է Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագծով:



«Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են համակցված արտադրության կայանքների կիրառմամբ կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի վերակառուցման հնարավորությունները և որպես առավել նպատակահարմար և հեռանկարային ընտրվել է Ավան շրջանը և մշակվել է նախնական տեխնիկա-տնտեսական հիմնավորում:

*Ավանի բազմաբնակարան շենքերը*

Ավան թաղամասի ԿՁ համակարգն ընդգրկում է մոտ 32 հազ. բնակչությանը 218 բազմաբնակարան բնակելի շենքերի ջեռուցումն ու տաք ջրամատակարարումը, որի իրականացումը նախատեսված է ըստ փուլերի:

Առաջին փուլով նախատեսված է Ավան վարչական շրջանի 6՝ Իսահակյան, Թումանյան, Վարուժան, Նարեկացի, Քուչակ և Հովհաննիսյան թաղամասերի 76 բազմահարկ բնակելի շենքերի ԿՁ վերականգնումը: Այս թաղամասերի ջերմամատակարարումը իրականացվելու է մեկ էներգաարդյունից՝ «Caterpillar» ընկերության արտադրության G3520C մակնիշի համակցված արտադրության 2 կայանքներով (յուրաքանչյուրը 2000 կՎտ էլեկտրական և 2180 կՎտ ջերմային դրվածքային հզորությամբ) կահավորված ինքնավար ջերմային էլեկտրակայանից («ԻՋԷԿ-1»-ից), որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 2009թ. դեկտեմբերի 15-ին:



*Ինքնավար ջերմային էլեկտրակայան*



*G3520C համակցված արտադրության կայանք*

ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի մասնագետների կողմից կիրառված գնագոյացման մոտեցումները հնարավորություն են տալիս ապահովել արտադրված ջերմային էներգիայի մրցունակությունն ու մատչելիությունը, նպաստելով ջերմամատակարարման շուկայի ընդլայնմանը և սոցիալական ու քաղաքաշինական նշանակություն ունեցող կարևոր հիմնախնդիրների լուծմանը: Այս մոտեցումները հիմք հանդիսացան ՀՀ Կառավարության 13.04.2006թ. թիվ 509-Ն որոշման համար, և հետագայում՝ ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի մասնագետների կողմից մշակված և ՀՀ ՀԾԿ-ի կողմից ընդունված «Օգտակար ջերմային պահանջարկի

հիման վրա համակցված արտադրության (կոգեներացիայի) էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդաբանության» համար (04.05.2007թ. թիվ 206-Ն որոշում):

Ներկայումս Ավանի 30 շենքերի բնակիչները մատչելի գներով օգտվում են կենտրոնացված ջերմամատակարարման ծառայություններից: Այստեղ ջերմային էներգիայի գինը կազմում է 16 դրամ/կՎտժ, այն դեպքում, երբ բնակարանային կաթսաների դեպքում այն կազմում է մոտ 20 դրամ/կՎտժ: Այս համեմատությունը միանշանակ վկայում է կենտրոնացված ջերմամատակարարման օգտին, որը ներմուծվող բնական գազի թանկացման պայմաններում էլ ավելի ակնհայտ ու շահավետ է դառնում:



«ԻՋԷԿ-1» - ի բացումը

«Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱՉԾ/ԳԷՖ ծրագրի և Ավանի ԿՁ վերականգնման ծրագիրն իրականացնող «ՀայՌ-ուսկոգեներացիա» ՓԲԼ-ի միջև 2006թ. դեկտեմբերի 26-ին ստորագրված Փոխըմբռնման հուշագրի համաձայն ՄԱՉԾ/ԳԷՖ ծրագիրն իր աջակցությունն է ցուցաբերել Ավանի ԿՁ վերականգնման ծրագրի ամբողջ ընթացքում:



«ԻՋԷԿ-1» - ի բացումը

«ՀայՌ-ուսկոգեներացիա» ՓԲԼ-ի խնդրանքով ՄԱՉԾ/ԳԷՖ Ծրագրին աջակցել է Ավան համայնքի 76 բազմաբնակարան շենքերում կենտրոնացված ջերմամատակարարման համակարգին միանալու համաձայնությունը պարզելու համար 2008 և 2009 թվականներին իրականացված հարցումների և արդյունքների վերլուծությանը: Ծրագրի փորձագետները բազմիցս հանդիպել են բնակիչների հետ՝ Ավանի ԿՁ համակարգի առանձնահատկությունների և առավելությունների մասին բացատրությունների տրամադրման նպատակով:

ՄԱՉԾ/ԳԷՖ Ծրագրի բյուջեի հաշվին ձեռք են բերվել և «ՀայՌ-ուսկոգեներացիա» ՓԲԼ-ին են հանձնվել 325 հատ ջերմային էներգիայի և տաք ջրի բնակարանային հաշվիչներ, ինչպես նաև 10 հատ տաք ջրի շենքային և ԿՁ հանգույցում տեղադրվող հաշվիչներ:



Կիոտոյի Արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի (ՄՁՄ) շրջանակներում իրականացման և համաֆինանսավորման նպատակով ՄԱՉԾ/ԳԷՖ Ծրագրի կողմից կատարվել է «Ավան» ծրագրի ջերմոցային գազերի արտանետման նվազեցման ներուժի գնահատումը: Ծրագիրը ներկայացրել է հայտ ՄԱՉԾ-ի տարածաշրջանային կենտրոնին՝ Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմով Երևան քաղաքի ջերմամատակարարման վերականգնման առաջնեկային նախագծերի հիմնավորման փաստաթղթերի մշակման տեխնիկական աջակցության համար:

Ըստ Ծրագրի փորձագետների հաշվարկի, թողարկման համալիրի (76շենք) ԿՁ իրականացման արդյունքում ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման չափը կկազմի մոտ 7300 տ/տարի: